4. ՊԱՌԱՎ ՄԱՐԳՐԻՏ

Մարգրիտ անուն պառավ կնիկ մը կէղնի ու ուր տղեն։ Էնոնց ապրուստ էմալ կէնին. տղեն հընչ իրիկուն կէրթա սարեն ցախ կշալկա, կբերա։ Կտանե շուկան կծախա, ուր ապրուստը կէնի։ Շատ-քիչ՝ էդրով կապրին։ Մեկ օր տղեն կէրթա սար, կտեսնա օր թե քարերու մեջ ճիտու մը ձեն կիգա։ Գնաց, իշքեց օր ճիտու տակ իրեք հավկիթ կա։ Առավ մեկ հավկիթ, էկավ, գնաց չարսուն։ Ընդեն օլորդուց, ընդեն օլորդուց, շատ օլորդուց, մեկ յահուդի մը ռաստ էկավ։

Ըսեց.—Էդ հավկիթ չը՞ս ծախի։

Ըսեց.—Կծախիմ։

Ըսեց.—Հա՛, քեզի տաս օսկի, էդ հավկիթ տու ընձիկ։

Ըսեց.—Տընաղ մ'էնե ընձիկ, յահուդի՛։

Ըսեց.—Քեզի տընաղ չը՛մ էնիմ։ Առ քեզի տրսնըհինդ հատ օսկի, ինչ օր էդ հավկթեն կէղնի, ընձիկ կբերես, մարդու չի տաս։

Առավ տրսնըհինդ հատ օսկին, էկավ, առավ մոր հըմար հաց ու պանիր ու յուղ։ Ուր մամուն ըսեց թե.—Ես էլ շալակ չըմ շալկիմ, էս հավկթներ կծախիմ, ընձիկ հերիք ա։

Մեկէլ օր գնաց, բերեց հավկիթ մը։ Բերեց, տարավ յահուդուն, յահուդին քսան օսկի տվեց էդ հավկիթ էմ լէ առավ։ Բերեց, էկավ առավ ուրեն հաց ուր մամուն, էկավ տուն։

Մեկէլ օր գնաց, մեկէլ հավկիթ էլ բերեց։ Բերեց օլորդուց, տարավ, էմ լէ յահուդուն տվեց, առավ էռսուն օսկի։

Էկավ առավ ուրեն հաց ու մաց, էկավ տուն։ Մամուն ըսեց թե.—Էլ հավկիթ չկա։—Ըսեց.—Լուսուն կէրթամ, բերիմ զճետ ծախիմ։

Գնաց լուսուն, սարեն առավ զճետն, էկավ։

Տարավ, գնաց յահուդուն զէդ ճետ։ Վաթսուն օսկի տվեց, առավ մեկ ճետ։ Յահուդին տարավ էդ ճետ մորթեց։ Տղեն կանավ մտածեց, թե հալբաթ էդ ճետուն մեկ բան մը կա, օր էդ յահուդին վաթսուն օսկի տվեց, առավ։

Տղեն գնաց չորս-հինգ ղուրուշ տվեց, գնեց էրկու հատ ճետ։ Գնաց յահուդու դուռ, յահուդին էդ տեղ չէր։ Տեսավ օր ուր վաթսուն օսկանոց ճետ հանդի յահուդու աղջկա ձեռք։ Հ'ինքն էլ խաբրդեց, էն էրկու սաղ ճետ տվեց, էն մորթուկ ճետ առավ։

Տարավ գնաց տուն, էդ մորթուկ ճետուն փոր ճղեց։ Իջքեց օր մեկ օսկի մատնիկըմ ճետու փորեն էլավ, հ'ինքն էլ կզարկեր ուր չոքի վրեն՝ սրբեր դեյի։ Մատընկից դուս էկավ էրկու արաբ, ասեցին.—Ի՞նչ կուզիս, էրկիր ավրի՞նք, թե՞՝ սուկինք։

Ըսեց.—Նը՛ ավրեք, նա՛ սուկեք։ Կեցեք տեսնանք։

Առավոտ էլավ, մամուն ըսեց թե.—Պըտի ես կարգվիմ։

Ըսեց.—Հա՛, քեզի կարգինք, վի՞ր աղջիկ կուզիս։

Ըսեց.—Արամ թագավորի աղջիկ պըտի ընձիկ ուզիս։

Ըսեց.—Աղե՛կ, Արամ թագավոր ու մենք՝ պառավ մը ուր տղեն, էն իմա՞լ ուր աղջիկ կիտա մըզիկ։

Մամուն ըսեց.—Մեկ գիշերվան մեջ, մըր տուն խընց Արամ թագավորին բանձր կսուկիմ։

Գիշեր մամ քնավ, տղեն մատնիկ ուր չոքին զարկեց, էրկու արաբ հ'առեջ կանան։

— Հա՛, աջխար ավրի՞նք, թե՞՝ սուկինք։

— Ո՛չ ավրեք, ո՛չ սուկեք։ Ջըզնե կուզիմ առավոտ իմ տուն քընց Արամ թագավոր տուն մը խաթ մը բանձր էղնի։

Լուսուն ուր մամն էլավ տեսավ, թե ուր քոխն դարձեր ա քոշկ ու սարա։ Էլավ էդ պառավ, գնաց օր թե թագավորի աղջիկ ուզա։ Գնաց առավոտուն թագավորի դուռ կանավ, դուռ զարկեց.—Խնամաթո՛ռ, խնամաթո՛ռ։

Խնամաթոռ դրեցին պառվու տակ, նստավ։ Թագավոր էլավ լուսացավ, տեսավ զպառավ, ըսաց.—Հա՛, պառավ, ի՞նչ ըս էկիր ֆս։

— Ես էկիր իմ օր թե քու աղջիկ ուզիմ իմ տղին։

— Ես ինչ օր կուզիմ, թե գլուխ բերեցիր, բերիր՝ իմ աղջիկ կուտամ քու տղին, թե օր չբերեցիր՝ քու գլուխ կզարկիմ։

Պառավ էլավ դուռ մտածեց ու էկավ տզի մոտ։

Տղեն ըսեց.—Նանե՛, ի՞նչ ըսեց քըզի։

— Թե օր իմ ուղած չիտաս, քո վիզ կղարկիմ, թե օր իմ ուզած տաս՝ իմ աղջիկ կուտամ քու տզին։

Տղեն ըսեց.—Գնա՛, ինչ օր ուզեց, ըսե՝ կիտամ։

Էլավ լուսուն, պառավ գնաց էմ լէ թագավորի պալատ։ Գնաց էմ լէ՝ «Խնամաթո՛ռ, խնամաթո՛ռ»։ Բերին աթոռ դրեցին, պառավ նստավ վրեն։

Արամ թագավոր ըսեց.—Պառա՛վ, էկար էմ լէ աղջըկա՞ն։

Ըսեց.—Հա՛, էկա աղջըկան։

— Է՞, իմ ուզած կիտա՞ս։

— Հա՛, ուզա, կիտամ։

Ըսեց.—Իմ ուզած իրեք ճուղ օչխար ա, բրդեղեն էղնի, էծ չէղնի։ Ըմեն սև էղնի, ուրանց գլուխ բաշ էղնի, դըմկի ծեր չալ էղնի, էրկու հատ լէ հովիվ հետն էղնի, էրկու հատ լէ սև ջուն։ Առավոտ օր դուռ էկավ, կանավ. իմ աղջիկ կիտամ, չէկավ՝ քու վիզ կզարկեմ։

Պառավ գնաց տղին խոսաց.—Դե՛,—ըսաց,—նանե՛, դու քնի, ես առավոտ կպատրաստիմ։

Տղեն մատնիկ չոքին զարկեց, էրկու արաբ կայնան։

— Հա՛,—ըսեց,—քու ուզելիք ի՞նչ ա։

Ըսեց.—Իմ ուզելիք, իրեք ճուղ սև մագի, ուրանց գլուխ բաշ, ուրանց դըմկընեբն էլ՝ չալ, էրկու հատ լէ հովիվ, էրկու հատ լէ սև ջուն, առավոտ թագավորի դուռ կանգըցուք։

Լուսուն ուր մամուն ըսեց թե.—Գնա՛, ինչօր ուզեր է, տվեր եմ։

Պառավ գնաց օր թե թագավորի դուռ կանած են օչխըրներ, շատ ուրախցավ, դուռ զարկեց, ներս մտավ, թագավորին ըսեց թե.—Հ'էլի՛, քու ուզած բերեցի։

Թագավոր էլավ տեսավ, օր իմալ օր ինք ուզեր էր, պառավն լէ բերեր էր։

Թագավոր մտածեց՝ էդա պառավ պըտի զիմ աղջիկ տանի։ Ապա ըսեց.—Պառավ, քինե կուզիմ իրեք հարիր ջորի ու գևա հ'ըմեն բարձուկ, ուրանց բեռներն լէ լալ ու դրա էղնի։ Թե բերիր՝ առավոտ բերեցիր, թը չբերեցիր՝ վիզդ կզարկեմ։

Էկավ պառավ խոսաց տղին թագավորի ուզածներ։

Տղեն մամուն խոսաց.—Դու քնի՛։

Մամ քնավ, տղեն մատնիկն շոքի վըրեն զարկեց։ Արարներ հ՚առեջ կանան։

Ըսեց.—Քինե կուզիմ իրեք հարիր ջորի ու դևա, իրենց բեռ-ներն լէ լալ ու դրռ, առավոտ շուտ թագավորի դուռը կանի։

Տղեն լուսուն ձեն տվեց մորը.—Էլի գնա տեսնենք էմա՞լ էղավ։ Քու ուզածը էկե՞ր ա։

Պառավ գնաց, տեսավ, թե իմալ օր թագավոր ուզած էր՝ էկած էր, դուռ կանած էր։

Պառավ զարկեց դուռ, մտավ ներս.—Է՛, թագավոր, քու ուզած բերեր իմ։

Թագավոր տեսավ օր ուզածը բերեր ա։ Թագավորն պառվուն ըսեց.—Պառա՛վ, էլ խոսք չունիմ ըսելու, բան օր քըզի կըսիմ՝ իմ տնեն ծառ ու ճյուղ կտնկիս մինչև քու տուն, քու տնեն էլ ծառ ու ճյուղ կտնկիս մինչև էրթա ժամ, օր հով անի, արև չառնի աղ-ջըկա վրեն ու տղին։ Էդ ծառերու մեջտեխ էլ մարմար քար կէնիս, թե օտներ ուրանց չլավոթին, թե էդմալ էղավ՝ էղավ, չէղավ՝ լու-սուն քու վիզ կզարկիմ։

Էլավ պառավ, էկավ տղին։ Տղին խոսաց էդ բաներ։

Ըսեց.—Դու քնի՛, լուսուն կհազրիմ։

Լուսուն էլավ ուր մամ տեսավ օր բաղուբաղչա զարկուկ մին-չև գացե թագավորի դուռ, էլավ խնդացավ ու գնաց։

— Հա՛, թագավոր, ըսելիք ունի՞ս։ Հանդե զաղջիկ ջորեր կհագում, կտանիմ պսակ։

Թագավոր ըսեց.—Ըսելիք չունիմ։ Տար ու գնա պսակա։

Տարավ, գնաց ուր տուն, մե ժամանակ իգարա էնեցին, ու-բախցան։

Դառնանք յահուդու վըրեն։ Յահուդին էկավ տուն, ըսեց.—Աղջի՛կ, հ՚ո՞ւր ա իմ մորթուկ ճետ։

Ըսեց.—Տվեր իմ, առեր իմ էրկու սաղ ճետ։

Յահուդին զարկեց ուր շոքերուն, մե քիչ լաց, հ՚ընկավ օլոր-դավ։

Ավուր մը մեկ էկավ էդ պառվու տան ռաստ էկավ։ Տեսավ օր էդ պառավ ու տղեն գացած ին բաղնիս, ամա ուրենց մատնիկ մոռցած ին փանջարեն։ Յահուդին էդ մատնիկը տեսավ, ճանչցավ, գողցավ ու էլավ դուս։

Յահուդին էդ մատնիկ զարկեց ուր չոքի վրեն. «Մատնիկ, քի-նե կուզիմ իդա քոչկ ու սարեն ու թագավորի աղջիկ յոթ ծովու կղզան ինձի դրիս։ Զպառավ ուր տղեն, ուրանց առաջի քոխի մեջ կդրիս»։

Պառվու տղեն համամու մեջ տեսավ, որ ինք ուր մեր ուրանց հին քոխի մեջ նստուկ, ո՞չ թագավորի աղջիկ, ո՞չ լէ մե բան։

Պառվու տղեն էլավ գնաց սար, օր ցախ ջալկա, ուրանց իդա-բեն էնին։ Մեկ օր գնաց սարեն ցախ շալկեց, բերեց, տեսավ օր մե պզտիկ սանդուխ մը դալալի ձեռ հանդէ կբոռա կօլորցու։

Կըսե.—Վուա՜ղլա, ցախի փարեն տամ, առնիմ ղէդա սան-դուխ։

Կտանի տուն, կբանա օր մեկ մուկ կա մեջ։ Գիշեր կպառկի կքնի, առավոտ կէլնի տեսնա, օր թե մե օսկի մը մուկ բերեր դրեր բարձի տակ։

Մամուն կըսե թե.—Էդի աղեկ բան էր։

Կէլնի կէրթա շարսուն, տեսնի շաքմաջե մը, դալալ կօլրցու, կբոռա։ Կառնի զէդ շաքմաջեն, կիգա։ Կիգա տուն, կբանա, թե մեկ կատու մը մեջն ի։ Ան օր կքնին։ Լուսուն կէլնի կտեսնի օր թե էրկու օսկի էղեր է էմ լէ օսկիմ լէ կատուն է բերեր։ Մեկէլ օր էմ լէ կէղնի կէրթա շարսուն, կտեսնա օր թե շաքմաջե մը լէ դալալի ձեռ։ Կառնի զէդ շաքմաջեն, կիգա տուն, կբանա օր թե մեկ տաժի ա մեջին։ Էդ տաժին, մուկն ու կատուն զիրեքն լէ կթորկա մեջ տախտին։ Էնպես կուրախնան վըր իրարու, հեչ ձեն չըն էնի իրա-բու։ Ինչ խըդար տղեն կքնի ու կէլնի, ամեն գիշեր իրեք օսկի ու-բեն կբերին, օսկի մը մուկ, մեկ՝ կատուն, մեկ՝ տաժին։

Կատուն ու մուկ ու տաժին մտածում էնեցին, ըսեցին.—Մըր տերու մատնիկ յահուդին տարեր ա, թագավորի աղջիկն էլ տա-բեր ա, Ի՞նք հանդի յոթ ծովու կղզան ա։ Քըլե վեճինք, թե իմալ բերինք զէդ մատնիկ։

Տաժին կատվուն ասեց թե.—Ի՞նչ շնորհք ունիս։

Ըսեց.—Իմ շնորհք օր ընձի կա, էն ա օր գիշեր կտեսնամ։

— Ապա,—ըսեց,—մուկ, դու ի՞նչ ունիս։

Մուկ լէ ասեց թե.—Նեղ ծկներ կմտնիմ, ուրիշ բան չըմ կէնա էնիմ։

Տաժին էլ ասեց.—Ես լէ լող գինամ, դե էրթանք ծովու պռուկ, օր թե անցնինք էրթանք։

Գացին ծովու պռուկ, տաժին թալվավ մեջ ծովուն, կատուն լէ էլավ տաժու պառեկին, մուկ լէ էլավ կատվու պառեկին. հեծան տաժին ու գացին ծովու մեջ։

Գացին էլան ծովուց դուս, յահուգու քոշկի մոտ. տաժին պատվըտավ, կատուն ու մուկ գացին բաղչի մեջ։ Մուկ պատվըտավ թըփերու տակ, կատուն լէ էդտեխ տան դուռ գնաց-էկավ, նըվնը-վաց։

Թագավորի աղջիկ բռնեց կատուն, խնդացավ վրեն, տարավ ներս, մուկ սըլվըլաց, էկավ-գնաց, էն լէ մտավ ներս գողտուկ, յահուդին էկավ տեսավ զկատուն, էն լէ խընդացավ վըրեն։

Հ'իրիկուն էղավ, յահուդին ու թագավորի աղջիկ պառկան քնան։

Մուկն ու կատուն տեսան։ Մուկ կատվուն խոսաց թե.—Կա-տո՛ւ, քու աչքեր լուսով ա, յահուդին զմատնիկ ո՞ւր դրեց։

Ըսեց թե.—Էձգեց ուր քիթ ու քնավ։

Մուկ գնաց գողցավ զբուռնութու խութին, բերեց տվեց կատ-վուն։ Կատուն բռնեց բուռնութու խութին, մուկ տզկեց զուր պոչ, դրեց բուռնութու խութու մեջ, տրորեց, մտցուց ի յահուդու պինչ։ Յահուդին հ'ինք փըռընգտաց, մատնիկն թռավ պատավ փողան։ Մուկն ու կատուն առան ու դուս ընկան։ Էկան տաժու մոտ, ծովու պռուկ, տաժուն ասեցին.—Դե՛, թալա քե ծովու մեջ, էրթանք մըր տիրու մոտ։

Տաժին ընկավ ծովու մեջ, շալկեց զիդա էրկուս, լող կիտան կուգան։ Էկան մինչև ջրի պռկի մոտ։ Տաժին ասեց.—Մե քիչ էլ մատնիկ տվեք, ես առնիմ իմ մոտ։

Կատուն ասեց թե.—Տաժի՛ ախպեր, քու բերան ճոռ ու մոռ ա, կթալես քու բերան ձըկներուն, մատնիկ կպատի ջրի մեջ, կկորի։

— Չէ՛,—ըսեց.—օր չի տաք իմ մոտ, զձի կթալիմ մըջ ծո-վուն։

Մատնիկ տվեցին տաժու մոտ։ Գացին մեկ քիչ ճանապարհ, մե ձուկ էլավ։ Տաժին օր բերան թալեց, մատնիկ պատավ մըջ ծովուն։ Հ'էլան դուս, իրեքանց։ Կատուն ընկավ ծովու պռկի հետ, էդ ձկան համար կօլորդի, տեսավ օր էրկու հոգի էկած օր ձուկ թալեն։ Էն մատնիկ օր կպատի մըջ ծովուն, մեկ ձուկ կկլու։ Վերջ օր թոռչիք կթալին, էդ ձուկ կըլի թոռին մեջ։ Կատուն կառնի զէդ ձուկ ու կփախի, կբերին էդ ձկան փոր կճղին, կբերին զմատնիկ

տիրու հ՚առեջ կդրին։ Տեր կվերցու մատնիկ, կզարկա վրը չոքին, կասա. «Մատնի՛կ, քենե կուզիմ, իմ քոշկ ու սարեն, թագավորի աղջիկ, յահուդին էլ, կապուկ ձեռներով մեջին, իգա տեղ կրերիսա»։

Էկավ ուր քոշկ ու սարեն, թագավորի աղջիկ, յահուդին էլ կապուկ ձեռներով։ Կբռնա զյահուդու վիզ կկտրա։ Ուրանք լէ կհասնին ուրանց մուրազին։